ՆԱԽԱԳԻԾ

ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<<___>>_____ 2010թ. N____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33/2 ՀԱՍՑԵԻ ԷԼԵԿՏՐԱԵՆԹԱԿԱՅԱՆԸ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի № 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետը և հաշվի առնելով, որ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Գրիար» փակ բաժնետիրական ընկերության միջև 12.01.2008թ. կնքված «Նախագծային աշխատանքների կատարման», 01.04.2009թ. կնքված «Կապալային աշխատանքների կատարման», 08.05.2009թ. կնքված «Հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման» և 08.05.2009թ. կնքված «Տեխնիկական հսկողության ծառայությունների» պայմանագրերի հիման վրա Բուզանդ փողոց, թիվ 33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանը և կաթսայատունը ամբողջովին կառուցվել են «Գրիար» փակ բաժնետիրական ընկերության միջոցներով, և այն հանգամանքը, որ կաթսայատունը և էլեկտրաենթակայանը նախատեսված են սպասարկելու նաև հարակից բազմաֆունկցիոնալ համալիրներին, «Գրիար» փակ բաժնետիրական ընկերության 2010 թվականի ապրիլի 1-ի № 61, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2010 թվականի հունվարի 15-ի № 06ԿԴ02/105 գրությունները, Երևանի քաղաքապետի 2006 թվականի հուլիսի 3-ի հ. 1069-Ա և 2008 թվականի դեկտեմբերի 8-ի հ. 5793-Ա որոշումները.

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին.

1) Երևան համայնքի սեփականությունը համարվող Բուզանդի փողոց, թիվ 33/2 հասցեում գտնվող՝ 02.03.2010թ. տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2277777 վկայականում նշված 225.2 քմ մակերեսով նկուղը և 1-ին հարկի 100.6 քմ մակերեսով թիվ 1 սենյակը (կաթսայատան համար նախատեսված մասը) անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Գրիար» փակ բաժնետիրական ընկերությանը՝ այն ըստ նպատակային նշանակության օգտագործելու համար:
2) Երևան համայնքի սեփականությունը համարվող Բուզանդի փողոց, թիվ 33/2 հասցեում գտնվող՝ 02.03.2010թ. տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2277777 վկայականում նշված 1-ին հարկի 46.5 քմ մակերեսով թիվ 2, 27.7քմ

մակերեսով թիվ 3, 8.7քմ մակերեսով թիվ 4, 6.6 քմ մակերեսով թիվ 5, 8.5 քմ մակերեսով թիվ 6 և 8.5 քմ մակերեսով թիվ 7 սենյակները՝ (էլեկտրաենթակայանի համար նախատեսված մասը) անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Հայաստանի էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ այն ըստ նպատակային նշանակության օգտագործելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33/2 ՀԱՍՑԵԻ ԷԼԵԿՏՐԱԵՆԹԱԿԱՅԱՆԸ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման

Երևանի քաղաքապետի 2006 թվականի հուլիսի 3-ի հ. 1069-Ա որոշմամբ Բուզանդ փողոցին հարող տարածքում էլեկտրաենթակայան կառուցելու նպատակով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին հատկացվել է 300 քմ մակերեսով հողամաս, որի 4-րդ կետով սահմանվել է, որ շինարարական աշխատանքների ավարտից հետո հողամասի հողօգտագործող ճանաչել «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին:

Երևանի քաղաքապետի 2008 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 5793-Ա որոշմամբ՝ հաշվի առնելով Գլխավոր պողոտայում իրականացվող բազմաֆունկցիոնալ համալիրների էլեկտրասնուցման և ջեռուցման համար կաթսայատուն կառուցելու անհրաժեշտությունը համապատասխան լրացում է կատարվել Երևանի քաղաքապետի 2006 թվականի հուլիսի 3-ի հ. 1069-Ա որոշման մեջ:

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Գրիար» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքվել են 12.01.2008թ. «Նախագծային աշխատանքների կատարման», 01.04.2009թ. «Կապալային աշխատանքների կատարման», 08.05.2009թ. «Հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման» և 08.05.2009թ. «Տեխնիկական հսկողության ծառայությունների» պայմանագրերը, որոնց հիման վրա Բուզանդ փողոց, թիվ 33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանը և կաթսայատունը ամբողջովին կառուցվել են «Գրիար» փակ բաժնետիրական ընկերության միջոցներով և 03.08.2009թ. համապատասխան «Հանձնման-ընդունման» ակտով հանձնվել են պատվիրատուին՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի թիվ 604-Ն որոշման հիման վրա Փավստոս Բուզանդի փողոցի 33/2 հասցեի կաթսայատունը և էլեկտրաենթակայանը գրանցվել է որպես համայնքային սեփականություն:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն համարվող գույքը (ներառյալ՝ հողի և իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցության) օգտագործման տրամադրելու և

օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, դրանց վարձավճարների և օտարման գների չափերի ու պայմանների, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գների վերաբերյալ:

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի № 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով սահմանվել է, որ Երևանի սեփականություն համարվող գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ:

Հաշվի առնելով վերը նշվածը և այն, որ կաթսայատունը և էլեկտրաենթակայանը ամբողջովին կառուցվել է «Գրիար» ՓԲ ընկերության միջոցներով, ինչպես նաև այն հանգամանքը, որ թե կաթսայատունը և թե էլեկտրաենթակայանը նախատեսված են սպասարկելու նաև հարակից բազմաֆունկցիոնալ համալիրներին, «Գրիար» փակ բաժնետիրական ընկերության 2010 թվականի ապրիլի 1-ի հ. 61 գրությունը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2010 թվականի հունվարի 15-ի № 06ԿԴ02/105 գրությունը, Երևանի քաղաքապետի 2006 թվականի հուլիսի 3-ի հ. 1069-Ա և 2008 թվականի դեկտեմբերի 8-ի հ. 5793-Ա որոշումները, առաջարկվում է Երևան համայնքի սեփականությունը համարվող Բուզանդ փողոց, թիվ 33/2 հասցեում գտնվող կաթսայատունը անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Գրիար» փակ բաժնետիրական ընկերության, իսկ էլեկտրաենթակայանը՝ «Հայաստանի էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33/2 ՀԱՍՑԵԻ ԷԼԵԿՏՐԱԵՆԹԱԿԱՅԱՆԸ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի Բուզանդի փողոց թիվ 33/2 հասցեի էլեկտրաենթակայանը և կաթսայատունն անհատույց օգտագործման հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. Բ Ե Գ Լ Ա Ր Յ Ա Ն

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33/2 ՀԱՍՑԵԻ ԷԼԵԿՏՐԱԵՆԹԱԿԱՅԱՆԸ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի Բուզանդի փողոց թիվ 33/2 հասցեի էլեկտրաենթակայանը և կաթսայատունն անհատույց օգտագործման հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևան քաղաքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Գ. Բ Ե Գ Լ Ա Ր Յ Ա Ն